ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Վերջին շրջանում աշխարհի շատ երկրներում պատշաճ ուշադրություն է դարձվում ոչ միայն տնտեսական զարգացման արդի պրոբլեմներին, այլև նրա պատմության ուսումնասիրմանը։ Դրա վկայությունն են ընթացիկ տասնամյակում տնտեսական պատմության միջազգային ասոցիացիայի կոնգրեսները։ Տնտեսական պատմության առաջին միջազգային կոնգրեսը տեղի ունեցավ 1960 թ., Ստոկհոլմում, իսկ հինգերորդը՝ այս տարվա օգոստոսի 10—14-ը, Լենինգրադում։

Ի տարբերություն նախորդների, հինգերորդ կոնգրեսում սոցիալիստական երկրներից ներկայացված զեկուցումների և հաղորդումների տեսակարար կշիռը բավականին բարձր էր։ Մոտ 150 զեկուցումներից և հաղորդումներից 32-ը ներկայացրել էին սովետական, 20-ը՝ սոցիալիստական մյուս երկրների գիտնականները։ Լենինգրադյան կոնգրեսի մյուս առանձնահատկությունը տնտեսական պատմության նախորդ կոնգրեսների համեմատությամբ առավել ներկայացուցչական լինելն էր։ Այստեղ էին հավաքվել աշխարհի մոտ 40 երկրների հազարից ավելի գիտնականներ՝ տնտեսագետներ, պատմաբաններ, սոցիոլոգներ, դեմոգրաֆներ։ Կոնգրեսի 9 սեկցիաներում քննարկվեց շուրջ 24 պրոբլեմ՝ նվիրված տնտեսագիտական մտքի, պլանավորման պատմության, աշխատանքային ռեսուրսների, դրամաշրջանառության և վարկի, Ռուսաստանի ինդուստրիալ զարգացման և այլ հարցերին։ Կոնգրեսի ծրագիրը ընդգրկում էր մարդկային հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման պրոբլեմները հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը։

Կոնգրեսի բացմանը ներածական խոսքով հանդես եկավ տնտեսական պատմության միջազգային ասոցիացիայի վիցե-պրեզիդենտ, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ա. Վինոգրադովը, որը նշեց ժամանակակից գիտության մեջ պատմա-տնտեսագիտական հետազոտությունների կարևոր դերը։ Այդ հետազոտությունների արդյունքներն առավել պարզությամբ և ամբողջությամբ արտացոլում են մարդկային հասարակության առաջընթացը նյութական, սոցիալական, կուլտուրական և այլ բնագավառներում։

Մեծ ուշադրությամբ լսվեց տնտեսական պատմության միջազգային ասոցիացիայի պրեզիդենտ, լե՝ գիտնական, պրոֆ. Վ. Կուլյայի ելույթը։ Նա ընդգծեց արդի պրոբլեմների ստեղծագործական քննարկման կարևորությունը գիտնականների միջազգային համագործակցության ամրապնդման գործում։ ՍՍՀՄ ԳԱ նախագահության անունից կոնգրեսին ողջունեց ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Մ. Ռումյանցևը։ Տնտեսագետ-պատմաբանների գիտական ավանդի կարևորությունը ժամանակակից գիտության մեջ իր ելույթում ընդգծեց պատմական գիտությունների միջազգային կոմիտեի պրեզիդենտ Պ. Արսենը (Բելգիա)։

Պլենար նիստում լսվեց երկու զեկուցում։ «Վ. Ի. Լենինը և տնտեսագիտությունը» թեմայով հանդես եկավ Վ. Ա. Վինոգրադովը։ Նա հանգամանորեն կանգ առավ տնտեսագիտության ամենատարբեր հարցերին նվիրված Վ. Ի. Լենինի աշխատություններում առաջ քաշված խնդիրների վրա։ Դրանք վերաբերում են կապիտալիզմի զարգացման, ագրարային հարաբերությունների, իմպերիալիզմի տեսության, սոցիալիստական հեղափոխության, նոր տնտեսական քաղաքականության, սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի, մասնավորապես երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցերին։ Զեկուցողը բնութագրեց Լենինի մեծագույն ավանդը մարքսիստական տնտեսագիտության մեջ, ընդգծեց, որ սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը, երկրի սոցիալ-տնտեսական կյանքի վերափոխման, սոցիալիզմի կառուցման պլանը հիանալի կերպով բռնեցին ժամանակի քննությունը։

ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ն. Եֆիմովը «Տնտեսական պլանավորման զարգացումը ՍՍՀՄ-ում» զեկուցման մեջ ընդգծեց, որ ներկայումս առաջադիմական գաղափարների մեջ կարևոր տեղ ունի հասարակության տնտեսական զարգացման պլանավորման գաղափարը։ Առաջին անգամ ազգային էկոնոմիկան պլանային սկզբունքով կազմակերպվեց ՍՍՀՄ-ում, որի փորձը գրավեց ամբողջ աշխարհի ուշադրությունը և դարձավ քաղաքակրթության սեփականությունը։ Տնտեսության պլանային համակարգը հիմք ծառայեց տնտեսական աճման բարձր և կայուն տեմպերի ապահովման համար, տեմ-

պեր, որոնք հնարավորություն ընձեռեցին պատմական շատ կարճ ժամանակահատվածում մեր երկիրը դարձնել հզոր ինդուստրիալ տերություն։ Պլանավորման կազմակերպումը ՍՍՀՄ-ում սովետական իշխանության առաջին տարիներին, նախապատերազմյան հնգամյակների շրջանում, Հայրենական պատերազմի տարիներին և հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում, այդ գործում հետագա անելիքները — ահա այն հիմնական լատպները, որոնց վրա կանգ առավ զեկուցողը։ Ա. Ն. Եֆիմովը շեշտեց, որ ՍՍՀՄ-ի փորձը վկայում է սոցիալիզմի պայմաններում հասարակական արտադրության զարգացման պլանային մեխանիզմի լիակատար հաղթանակը։

Առանձին պրոբլեմների շուրջը ըստ սեկցիաների տեղի ունեցան նիստեր, որտեղ քննարկվեցին առավել հետաքրքրություն ներկայացնող հարցեր։

Առաջին սեկցիայի (ղեկավար՝ Ա. Վ. Քոաթս, Նոտինգհեմի համալսարան, Անգլիա) աշխատանքը նվիրված էր տնտեսագիտական մտքի պատմությանը։ «Տնտեսական զարգացման կոնցեպցիան և տնտեսական քաղաքականությունը XVII—XVIII դդ.» թեմայի շուրջ զեկուցումով հանդես եկան Ժ. Սպենգլերը և Ու. Ալլենը (ԱՄՆ-ից)։ Տնտեսագիտական միտքը Ֆրանսիայում XVI—XVII դդ., մերկանտիլիստական տեսության ազդեցությունը Գերմանիայի տնտեսական քաղաքականության վրա երեսնամյա պատերազմից հետո, Ժնեի տնտեսական քաղաքականությունը և մերկանտիլիզմի դոկտրինան (1680—1740 թթ.), տնտեսագիտական միտքը Անգլիայում 1550—1750 թթ. և այլ հարցերի շուրջը ելույթ ունեցան Դ. Ռիշեն (Փարիզ), Ֆ. Բլայինը (ԳՖՀ), Աննա-Մարիա Պիյուզը (Շվեյցարիա), Ա. Վ. Քոաթսը (Անգլիա) և ուրիշներ։

XIX—XX դդ. տնտեսագիտական մտքի զարգացման վերաբերյալ կարդացված Տ. Հաչիսոնի (Անգլիա) զեկուցման մեջ ընդգծվեց տնտեսական գաղափարների ազդեցությունը քաղաքականության վրա։ Հետաքրքրությամբ լսվեցին Ա. Գ. Միլեյկովսկու (Մոսկվա), Կ. Դ. Գուդվինի (ԱՄՆ), Զ. Սուգիյամայի (Ճապոնիա), Հ. Ուիլյամսոնի (ԱՄՆ), Պ. Բարրուչիի (Իտալիա), Դ. Ունեի (Անգլիա) հաղորդումները նշված հարցի մասին։

Երկրորդ սեկցիան (ղեկավար՝ պրոֆ. Ցա. Մարշևսկի, Փարիզ) զբաղվեց պլանավորման պատմության հարցերով։ Այստեղ ուշադրություն դարձվեց երկու հիմնական հարցի վրա. ա) պլանավորման սկզբնավորումը և զարգացման փուլերը, բ) պլանավորման դերը տնտեսական զարգացման գործում։ Զեկուցեցին Ցա. Մարշևսկին և Վ. Ֆալկը (ԳԴՀ), առաջինը՝ պլանավորման մեթոդների էվոլյուցիայի մասին, երկրորդը՝ սոցիալիզմի պայմաններում տնտեսական զարգացման գործում պլանավորման դերի մասին։ Զեկուցողները և հաղորդումներով հանդես եկողները նշեցին, որ տնտեսական պլանավորման առաջին փորձը Վ. Ի. Լենինի մշակած ԳՈԷԼՐՈ-ի պլանն էր։ Գ. Մ. Սորոկինի, Պ. Ն. Պերշինի, Ա. Դ. Կուրսկու, Լ. Ցա. Բերրիի (Մոսկվա), Վ. Ֆալկի (ԳԴՀ) ելույթներում քննադատական վերլուծության ենթարկվեցին արևմտյան որոշ կոնցեպցիաներ՝ պլանավորման ծագման և նրա դերի գնահատման հարցում։ Նրանք մասնավորապես շեշտեցին պլանավորման դերը երկրի տնտեսական զարգացման տեմպերի արագացման, բնակչության բարեկեցության աճման, պլանի շրջանակներում ձեռնարկությունների ինքնուրույնության մեծացման գործում։ Բուրժուական տեսաբանները միշտ էլ ձգտել են գործը այնպես պատկերել, որ իբր պլանավորումը սոցիալիզմի առանձնահատկությունը չէ, այլ գոյություն է ունեցել հազարամյակներ շարունակ՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից։ Նրանք հատկապես շեշտը դնում են կապիտալիզմի պայմաններում պլանավորման ծավալման վրա։ Այդ տեսակետից բացառություն չկազմեց և Լենինգրադյան կոնգրեսը։ Բանավեճի մեջ մտնելով բուրժուական երկրների տնտեսագետ-պատմաբանների դեմ. սոցիալիստական երկրների գիտնականները ապացուցեցին պլանային տնտեսության, պլանավորման իրականացման անհնարինությունը մինչսոցիալիստական հասարակարգերում։ Առանձնապես նպատակասլաց էր Գ. Սորոկինի ելույթը։ Նա մեջբերումներ արեց բուրժուական տեսաբաններ՝ անգլիացի Ջոնսոնից, ամերիկացի Բիրդից, որոնցից առաջինի պնդմամբ պլանավորմամբ զբաղվել են դեռ Քրիստոսի ժամանակներում (նկատի ունենալով այն առասպելը, որ վերջինս 5 հազար մարդու շարքերով նստեցնելով կանաչ խոտի վրա, կազմակերպված ձևով կերակրել է նրանց, ընդ որում ըստ պատանչի)։ Իսկ ըստ Բիրդի, պլանավորումը կապիտալիզմի ուղեկիցն է։ Սովետական գիտնականը ցույց տվեց, որ պլանավորումը, պլանային տնտեսությունը անհարիր են կապիտալիստական անարխիայի հետ և հատուկ են միմիայն սոցիալիզմին ու կոմունիզմին։ Նշեց նաև, որ պլանավորման տեսությունը ծնունդ է առել XIX դ. կեսերին՝ Մարքսի և Էնգելսի աշխատություններում, իսկ պլանային պրակտիկան՝ ավելի ուշ։ Պլանավորման առաջին փորձ կատարողը եղել է Փարիզի կոմունան։

Երրորդ սեկցիայում (ղեկավար՝ պրոֆ. Պ. Դեպրե, Կանադա) քննարկվեցին աշխատանք-

յին ռեսուրսներին վերաբերվող պրոբլեմները։ Եթե աշխատանքային ռեսուրսներին նվիրված նախկին նիստերը զուտ պատմական բնույթ ունեին, ապա այս անգամ դրան զուգընթաց շոշափվեցին նաև հեռանկարային հարցեր։ Աշխատանքի բաժանման պրոբլեմը և աշխատուժի ներքին միգրացիան քննարկվեց որպես առանձին հարց (զեկուցող՝ Ռ. Մաքինիս, Կանադա)։ Պրոբլեմի առանձին կողմերի մասին ելույթ ունեցան Վ. Ի. Պերեեդենցևը (Մոսկվա), Գ. Վաթթերը (ԱՄՆ), Ջ. Կրիշնամուրտին (Հընդկաստան), Ն. Վուկոն (Հարավսլավիա) և ուրիշներ։ Բավականին հետաքրքիր անցավ նաև միջազգային միգրացիոն պրոցեսների հարցի քննարկումը (զեկուցող՝ Պ. Դեպրե)։

Զորրորդ սեկցիայում (ղեկավար՝ պրոֆ. Ռ. դե Բուվեր, Նյու-Յորք) ուշադրության կենտրոնում էին դրամաշրջանառության և վարկի պրոբլեմները։ Ռ. դե Բուվերը և Ռ. Քամերոնը (ԱՄՆ) խոսեցին կապիտալիզմի սկզբնավորման պայմաններում բանկային վարկի, տնտեսական զարգացման գործում նրա խաղացած դերի մասին։ Գ. Վան դեր Վեեի (Բելգիա), Վ. ֆոն Շտրոմերի (ԳՖՀ), Մ. Գ. Բյուիստի (Նիդերլանդներ) զեկուցումները վերաբերում էին միջազգային ֆինանսական հարաբերություններին 1550—1850 թթ. ընկած ժամանակաշրջանում։ Մասնավորապես Բյուիստը հետաքրքիր տվյալներ բերեց կապիտալի հոլանդական շուկայում XVIII դ. վերջին քառորդում Ռուսաստանի երևան գալու մասին։ Ամերիկյան գիտնականներ Ռ. Ռոբերտսոնի, Պ. Լինդերթի, Պ. Աբրահամսի, Ա. Սքոթթի զեկուցումները նվիրված էին վերջին հարյուրամյակի միջազգային ֆինանսական հարաբերությունների և վալյուտային սիստեմի պատմությանը։

Հինգերորդ սեկցիայի (ղեկավար՝ պրոֆ. Ջ. Վ. Ուդալցովա, Մոսկվա) աշխատանքը նվիրված էր ֆեոդալական սեփականության առաջացման պրոբլեմին։ Այստեղ լսվեցին երեք զեկուցում և 10 հաղորդում ֆեոդալական սեփականության ձևերի էվոլյուցիայի մասին։ Բովանդակալից զեկուցումներով ու հաղորդումներով հանդես եկան Ա. Ռ. Կորսունսկին, Վ. Դ. Կորոլյուկը (Մոսկվա), Եժի Տոպոլսկին (Լեհաստան), Ն. Ե. Նոսովը (Լենինգրադ), Ի. Կարամանը (Հարավսլավիա), Խ. Կ. Տակախասին (Տոկիո), Գ. Գ. Կոտովսկին (Մոսկվա)։

Վեցերորդ սեկցիայում (ղեկավար՝ պրոֆ. Գ. Քելլենբենց, Քյոլնի համալսարան, ԳՖՀ) քննարկվեցին Եվրոպայի և Ասիայի միջև նախքան երկաթուղային հաղորդակցության ստեղծումը եղած ցամաքային առևտրական հարաբերությունների հարցերը։ Դրանք էին՝ առևտրական հարաբերությունների զարգացումը եվրոպական մայր ցամաքում՝ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի միջև, նույնը Եվրոպայի և Ասիայի միջև, ցամաքային առևտրական ուղիների հետազոտման մեթոդոլոգիան և աղբյուրները։ Առաջին հարցի շուրջ զեկուցեց պրոֆ. Քելլենբենցը։ Հաղորդումներով հանդես եկան Մ. Մալովիստը (Վարշավա), Ա. Ատմանը (Նվեդիա), Ռ. Կիրխները (ԱՄՆ) և ուրիշներ։ Ի. Պ. Շասկոլսկին (ՍՍՀՄ) ընդհանրացնելով նորագույն տվյալները, նշեց, որ XVI—XVII դդ. Ռուսաստանի արտաքին առևտրի զարգացման գործում հիմնական դերը խաղացին բալթիական և հյուսիսային «առևտրական ուղղությունները»։ Երկրորդ հարցի մասին հետաքրքիր հաղորդումներով հանդես եկան Դ. Լ. Մուսխելիշվիլին (Թբիլիսի) և Ս. Տ. Երեմյանը (Երևան)։

Առանձնապես ուշագրավ էր ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի հաղորդումը «Հայաստանի և հայ վաճառականության դերը Եվրոպայի և Ասիայի միջև առևտրի զարգացման գործում մինչև XIX դ.» թեմայով։ Հայ գիտնականը հանգամանորեն կանգ առավ Եվրոպայի և Ասիայի երկրների միջև առևտրի զարգացման գործում Հայաստանի և հայ վաճառականության դերի գնահատման վրա՝ սկսած մ. թ. ա. երկրորդ հազարամյակի սկզբից մինչև XIX դ.։ Բերեց տեղեկություններ Ստրաբոնից, Հերոդոտից, որոնք շեշտել են հայերի դերը առևտրի ծավալման, տարբեր երկրների հետ կապերի ընդլայնման գործում։ Հայաստանի աշխարհագրական բարենպաստ դիրքը նրան դարձրել էր Արևելքի և Արևմուտքի առևտրական ճանապարհների հանգուցակետը։ Դա առանձնապես նկատելի է եղել Ուրարտուի ծաղկման, Արտաշեսյան և հայ Արշակունյաց թագավորության շրջանում։ Բագրատունիների ժամանակ առաջացան առևտրի ու արհեստների նոր կենտրոններ՝ Անին, Կարսը և այլն։ X դ. սկսած հայ վաճառականները Վոլգայով և Դնեպրով թափանցեցին Ռուսաստանի խորքերը։ Նրանք մեծ դեր խաղացին Ոսկե Հորդայի և հատկապես Սուզդալի, իսկ Բագրատունիների ժամանակ առաջացան առևտրական շրջանառության գործում։ Մոնղոլական և հետագա արշավանքներից հետո մեծ չափերով տուժեցին առևտուրը և արհեստները, ավերվեցին քաղաքները։ XVII դ. վերջերից հայ վաճառականությունը հիմնականում սկսեց գործել Հնդկաստանում (Մադրաս) ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը (1828 թ.)։

Յոթերորդ սեկցիայում (ղեկավար՝ պրոֆ. Խ. Վ. Պլեկետ, Լեյդենի համալսարան, Հոլանդիա) բովանդակալից զեկուցումներ և հաղորդումներ լսվեցին նվիրված հին աշխարհի տնտեսական պատմությանը, մասնավորապես, Հին

Արևելքի երկրների դրամին, առևտրին, վարկին և քաղաքային տնտեսությանը։ Այստեղ քննարկվեցին նաև հունա-հռոմեական աշխարհի դրամական տնտեսության, ինչպես նաև ստրկական աշխատանքի արտադրողականության պրոբլեմները։ Պրոֆ. Ա. Լ. Օպենհեյմը (ԱՄՆ) զեկուցեց Մերձավոր Արևելքի հնադուն առևտրի մասին, իսկ Ժ. Պ. Կալլյուն (Ֆրանսիա)՝ հռոմեական հասարակության մեջ (կայսրության շրջանում) փողի ֆունկցիաների մասին։ Մեծ ուշադրությամբ լսվեց դրան աշխարհի պատմության դիտակ, սովետական գիտնական Ի. Մ. Դյակոնովի ելույթը Հին Արևելքի քաղաքային տնտեսության մասին։ Այն վերաբերում էր մ. թ. ա. Երրորդից-երկրորդ հազարամյակին։ Գիտնականը առաջ քաշեց մի շարք նոր դրույթներ, որոնք կապված էին Բաբելոնի քաղաքային տնտեսության հետ և ցույց տվեց, որ Արևելքում ևս, ինչպես Աթենքում ու Հռոմում, տնտեսական կյանքի կենտրոն համարվում էին ոչ թե տաճարները, այլ քաղաքները։ Ասորական քաղաքային տնտեսությանն էր նվիրված Մ. Լ. Գելցերի (ՍՍՀՄ) հաղորդումը։ Սեկցիայի եզրափակիչ նիստում, որտեղ շոշափվեց Հունաստանում և Հռոմում ստրկական աշխատանքի արտադրողականության հարցը, ելույթ ունեցան Կ. Մ. Կոլոբովան (ՍՍՀՄ), Եժի Կոլենդոն (Վարշավա), Ե. Բիքերմանը (Կոլումբիայի համալսարան, ԱՄՆ)։

Ութերորդ սեկցիայում (ղեկավար՝ պրոֆ. Պ. Վիլար, Սորբոնի համալսարան, Փարիզ) քննարկվեցին տնտեսական և սոցիալական կառուցվածքի մոդեռնացման պրոբլեմները բազմակացութաձև էկոնոմիկայի պայմաններում։ Զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Վիլարը։ Բանավեճին մասնակցեցին Տ. Կ. Սմաութը (Շոտլանդիա), Մ. Մորինոն (Ֆրանսիա), Խ. Պերկինը (Անգլիա), Վ. Դլուգոբորսկին (Լեհաստան), Կ. Տարնովսկին (ՍՍՀՄ) և ուրիշներ։

Ուշադրության կենտրոնում էր XIX—XX դդ. Ռուսաստանի ինդուստրիալ զարգացման հարցը, որի շուրջ զեկուցեցին Վ. Ի. Բովիկինը (Մոսկվա) և Ա. Դ. Բորորիկինը (Լենինգրադ)։ Եթե առաջին զեկուցումը նվիրված էր Ռուսաստանի ինդուստրիալ զարգացմանը սկսած ճորտատիրական իրավունքի վերացումից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, ապա Բորորիկինը խոսեց Սովետական Միության ինդուստրիալ զարգացման մասին։

Սեկցիայում նշված հարցերի շուրջ հաղորդումներով հանդես եկան Վ. Զ. Դրոբիժևը (Մոսկվա), Ու. Տրոիշը (ԳՖՀ), Ա. Ս. Սումբատզադեն (Բաքու). Ա. Ա. Առաքելյանը (Երևան)։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Առաքելյանը կանգ առավ Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացման ընթացքի, նրա առանձնահատկությունների վրա։ Նշեց այն խոշոր նվաճումները, որոնք ձեռք է բերել Հայաստանը սովետական իշխանության տարիներին, ինչպես նաև մասնակցեց ինդուստրացման բնորոշման, նրա ժամկետների հարցի շուրջ ծավալված բանավեճին։

Իններորդ սեկցիայի (ղեկավար՝ պրոֆ. Ք. Գլաման, Կոպենհագեն, Դանիա) աշխատանքը նվիրված էր տնտեսական երևույթների հետազոտման մեթոդիկայի և մեթոդոլոգիայի հարցերին։ Մեթոդոլոգիայի մասին զեկուցեցին Ի. Բերենդը և Գ. Ռանկին (Բուդապեշտ)։ Դրան զուգընթաց ներկայացվեց ֆրանսիական գիտնականների կոլեկտիվ զեկուցումը տվյալների հավաքման ու մշակման կոորդինացման մասին։ Պրոֆ. լե Ռուա Լադյուրին առաջարկեց, որ ինֆորմացիայի հավաքումը կատարվի միջազգային հիմունքով՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար։ Նա նշեց, որ տնտեսական պատմության ուսումնասիրությունը ներկայումս անհնար է առանց էլեկտրոնային հաշվիչ մեքենաների։ Բոլոր ելույթ ունեցողներն արտահայտվեցին Լադյուրիի առաջարկության օգտին։ Էստոնացի գիտնականներ Խ. Պալլին և Ցու. Կախկը պատմեցին պատմաբանների և կիբերնետիկների համագործակցության արդյունավետ փորձի մասին։

Եզրափակիչ պլենար նիստում հանդես եկան կոնգրեսի պրեզիդենտ Վ. Ա. Վինոգրադովը և սեկցիաների ղեկավարները։

Տնտեսական պատմության միջազգային ասոցիացիայի գլխավոր ասամբլեան ասոցիացիայի նոր պրեզիդենտ ընտրեց դանիացի անվանի գիտնական, Հարավային Ասիայի երկրների տնտեսական պատմության մասնագետ պրոֆ. Քրիստոֆ Գլամանին։ Պրոֆ. Վ. Կուլյան ընտրվեց ասոցիացիայի պատվավոր պրեզիդենտ։

Տնտեսական պատմության հաջորդ (վեցերորդ) միջազգային կոնգրեսը կկայանա 1974 թ. Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում։

Լ. Զ. ԱՆԱՆՅԱՆ